




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԻՍ. ՏԵՐ-ՆԵՐՍԻԱՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ՄՇԱԿԵԼ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԸ

ԳԻՆՆ Ե 35 ԿՈՄ.

634.8
S-48

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1925

630
135-ՏԵ

Պրոլետարներ բոլոր յեղեղների, միացե՛ք.

ՀՐԱՏԱՐԱՆԻՓՇՈՒՆ

№ 13 (16) «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի № 13 (16)

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի ՀՐԱՏԱՐԱՆԻՓՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՅԵՍԵԼ

1. Ս. Շաղուհյ. — Մեր անելիքները 20 կ.
2. Հ. Փիլոսոֆյան յիվ Ա. Մեղիճյան. — Ինչու ձեռնառու չե
զործարանում յուզ և շվեյցարական պանիր պատրաս-
տելը 3 »
3. Հ. Փիլոսոֆյան. — Ստաբուլյանը և նրանց մշակութային
յեղանակները 10 »
4. Խ. Ավագլեկյան. — Հ. Ս. Մ. Հ. Հոգային Որենդիրքը,
բացատրական հարց ու պատասխաններով, մասն առա-
ջին, աշխատավորական հողագործություն 40 »
5. Պ. Հեֆիմյան. — Թիֆնու մշակութայինը 10 »
6. Պ. Հեֆիմյան. — Շերամի վորդը, նրա կերակրելն ու
խնամքը 10 »
7. Կ. Մելիք-Շահնազարյան. — Ծխախոտի մշակութայինը 20 »
8. Ս. Ֆրիդլին. — Տասը պատգամ անտանապահին 20 »
9. Խ. Յերիցյան. — Անհատական, թե՛ կոոպ. կաթնատնտես. 10 »
10. Հ. Հաուսբյուրգ. — Բատրակ կներիր պայմանագիր (չափ.) 5 »
11. Մ. Թաճմանյան. — Շարքացանքը և նրա նշանակու-
թյունը 15 »
12. Խ. Սե. Ներսիսյան. — Ինչպես մշակել խաղողի այգի-
ները 35 »

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հ. Աղաջյան. — Գյուղատնտեսական բանվորությունը
և միջազգային կոմունիստական շարժումը
2. Վեբերգիս զեպի զյուզ. — Անգրյերկոմի վորոշումները
գյուղացիական հարցի մասին, Ս. Շաղուհյի հա-
խարանով
3. Համամյուրեքնական Խորհուրդների III Համագումարի
վարձումները
4. Խ. Յերիցյան. — Կաթնատնտեսության զործնական
ձեռնարկ, մասն առաջին, (64 նկարով)
5. Հ. Փիլոսոֆյան. — Դեմի Հոգերի մշակութայինը

634.8
Տ-48
99801
10891

Խ. ՏԵՐ-ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՄՇԱԿԵԼ
ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԸ

ՅԵՐԵՎԱՆ

1925

078
12-2-1

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Խորհրդային Հայաստանի Հողագործության ժողովրդական Կոմիսարիատը «Գյուղացու Գրադարան» ընդհանուր վերնագրի տակ ձևավորվել և գյուղատնտեսության զանազան ճյուղերին նվիրած մի շարք գրքույկների հրատարակության: Նա նպատակ ունի այդ գրքույկների միջոցով զարկ տալ գյուղական տնտեսության բարձրացման և նպատակահարմար ձևավորով տնտեսությունը վարելու գործում՝ պարզ ու ըմբռնելի ցուցմունքներով աջակցել գյուղացուն: Այս հիմնական նպատակն իրագործելու համար գրքույկների նյութը հարմարեցված է միջին գրագետ գյուղացու պահանջներին:

Հավ գիտակցելով ձեռնարկված գործի լրջությունն ու կարեվորությունը, Հողօրոգիմատի Խմբագրական-Հրատարակչական Կոլլեգիան համոզված է, վոր այս գրքույկը, ինչպես յեվ մինչեվ որս իր հրատարակությանը լույս տեսած մյուս գրքույկները, նյութի յեվ լեզվի տեսակետից վորոշ թերություններ կարող են ունենալ:

Թե՛ այդ յեվ թե՛ այլ հնարավոր թերությունները վերացնելու, հրատարակության գործը կանոնավորելու յեվ գյուղացու պահանջները բավարարելու համար Հողօրոգիմատի Խմբագրական Հրատարակչական Կոլլեգիան խնդրում է ընթերցողներին յեվ գյուղատնտեսության աշխատավորներին իրենց դիտողություններն ուղարկել Յերեվան, Հողօրոգիմատ:

Ամեն մի արժեքավոր դիտողություն կընդունվի մեծ շնորհակալությամբ:

Ծրաները կարելի յե ուղարկել առանց նամակադրոշմի:

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԽՄԲ. ՀՐԱՏ. ԿՈՂԼԵԳԻԱ

Խմբագրությամբ

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԽՄԲ. ԿՈՂԼԵԳԻԱ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վազի մշակությունը Հայաստանում հայտնի յե շատ հին ժամանակներից: Հայտնի յե, վոր նա տարածված ե յեղել Հռոմում, Հունաստանում, Պարսկաստանում, Հայաստանում և հարավային ուրիշ շատ ու շատ յերկրներում, վորտեղից աստիճանաբար տարածվել ե Յեվրոպայի զանազան յերկրներում, ուր ներկայումս գյուղատնտեսական արդյունաբերության գլխավոր ճյուղերից մեկն ե կազմում:

Խաղողը յուր զարգացման համար պահանջում ե բավական բարձր ջերմություն, վոչ պակաս քան 15 աստիճան ըստ Ցելսիուսի և առնվազն 6-7 ամիս ժամանակ: Այս պահանջին բավարարում են համարյա բացառապես հարավային յերկրները: Մեզանում խաղողի մշակությունը զարգացած ե գլխավորապես տափարակային, բարձր տաքություն ունեցող շրջաններում, ինչպես են Յերևանի, Ղամաղուի, Եջմիածնի և նման վայրերը:

Կազմելով մեր գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկը և բռնելով մոտ 8000 դես. տարածություն, խաղողի մշակութիւնը մեզնում մինչ այսօր գտնվում ե կուլտուրական ցածր վիճակում, շնորհիվ նրա մշակության կիրառվող ձևերի:

Յեվ իսկապես, յեթե մենք համեմատենք մեզնում ստացվող խաղողի բերքը հարևան յերկրների բերքի հետ, կտեսնենք, վոր այստեղ վազի մշակությունը պահանջում ե անհամեմատ ավելի շատ ծախս և տալիս ե ավելի պակաս բերք, քան մեր հարևան յերկրներում: Այսպես որ, մինչդեռ Հայաստանում խաղողի միջին բերքը 400—

450 փթից ավելի չե մեկ դեսյատնից, Ադրբեջանում այդ մեջինը հասնում է 8—900-ի, իսկ Վրաստանում 600 փթից պակաս չե: Պատճառը մեզնում գոյություն ունեցող այգիների ընդունված «թմբերի» ձևն է, վոր մի կողմից դժվարացնում է մշակությունը, իսկ մյուս կողմից՝ թանգացնում այն: Պատճառը վորոշ չափով պետք է համարել և այն հանգամանքը, վոր մեր յերկրում մինչև վերջին ժամանակներս համարյա վոշ մի լուրջ աշխատանք չի կատարվել այդ մշակույթի արդյունաբերության բարձրացման համար:

Միայն վերջերս լուրջ քննության առարկա է դարձել խաղողի մշակույթի կարևոր խնդիրը և նրա արդյունաբերության բարձրացման հնարավոր միջոցները փնտրելու փորձեր են կատարվում: Ներկայ աշխատությունը խաղողի արդյունաբերության բարձրացման միջոցները ցույց տալու մի փորձիկ փորձ պետք համարել:

I. ՆՈՂԸ

Խաղողի այգի կարելի չե տնկել շատ տարբեր հողերի վրա, սկսած ամենահարուստ սևահողերից մինչև ավագոտ հողերը: Մեզնում նա հաջողությամբ զարգանում է և հարթավայրերի կավային հողերում, և գետերի ու ձորերի հարուստ հովիտներում, և մինչև իսկ կրային հողերում, վորոնք այնքան շատ են մեր խաղողի մշակության շրջաններում: Նա հաջողությամբ մշակվում է Բեսարաբիայի սևահողերում, նույն շրջանի բացարձակ ավագոտ հողերի վրա, Ղրիմի հարավային քարքարոտ վայրերում և նոյն իսկ Աստրախանի շրջակայքի աղառատ (չոռաքյաթ) հողերում:

Ընդհանրապես պետք է ասել, վոր խաղողի կուլտուրան ավելի հաջող է լինում թեթև, փխրուն կամ միջակ ամրություն ունեցող հողերի մեջ: Ավելի ծանր, կավային կամ սևահողային տեղերում թեև նա լավ է զարգանում, բայց ստացված խաղողը ցածր վորակ է ունենում: Մինչդեռ թեթև հողերի վրա, ընդհակառակն, նրա վորակը շատ բարձր է լինում:

Նկատված է, վոր սև, կարմրավուն և գորշ հողերի մեջ խաղողի վազն ավելի լավ է արմատակալում և ավելի ուժեղ է զարգանում, քան բաց գոյնի հողերի մեջ: Այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր սևավուն հողերը արևի ազդեցությունից ավելի արագ և ուժեղ են տաքանում, քան բաց գույնի հողերը, թեև սևավուն հողերում խաղողի քաղցրությունը ավելի պակաս է լինում: Մյուս կողմից պետք է նկատել, վոր բաց գույնի հողերում սպիտակ խաղողները ավելի լավ են լինում, քան սևերը:

Մանր խրճատ (բարքարոտ) հողերը լավ են խաղողի համար, վորովհետև արևի ազդեցութիւնից նրանք հեշտությամբ և շատ ուժեղ են տաքանում և պահպանում են հողի խորքերի խոնավութիւնը: Գարքարոտ հողերում, թեև խաղողը համեմատաբար ավելի բիշ բերք է տալիս, բայց ստացված պտուղը ավելի բարձր հատկութիւն է ունենում: Այսպես են որ. մեզնում Յերևանի դարձայի այգիները, Եջմիածնի շրջանի դռերը և այլն:

II. ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒ ԴԻՐՔԸ. ԼՈՒՅՍԻ ՅԵՎ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խաղողի այգու տեղը կամ դիրքը կարևոր նշանակութիւն ունի: Բարձր թմբերի տափարակ գլուխները վաղի համար քիչ հարմարութիւն ունին, վորովհետև այդտեղ հողերը մեծ մասամբ աղքատ են լինում և շարունակ ուժեղ քամիների բերանում են գտնվում: Այդպես չէ լանջերի վրա: Այստեղ խաղողի այգիները պաշտպանված են լինում սաստիկ քամիներից և արևի ազդեցութիւնն էլ (լույսն ու ջերմութիւնը) ավելի մեծ է լինում: Այս տեսակետից գնահատելի յեն մանավանդ հարավային լանջերը, ուր լույսի և ջերմութիւնի համար ամենալավ պայմանները գոյութիւն ունեն: Մեզնում այս հանգամանքները շատ կարևոր են և այդու համար տեղ ընտրելիս, պետք է զերադասել անպայման հարավային լանջերը:

Տափարակ ու հարթ տեղերում և լանջերի ստորոտներում սովորաբար հողն ավելի հարուստ է լինում: Այդ պատճառով այստեղ վազն ավելի ուժեղ է զարգանում, ավելի փարթամ լինում և ավելի շատ բերք է տալիս, քան լանջերի վրա և բարձր մասերում: Սակայն տափարակի խաղողից ստացված գինին ավելի թույլ է լինում: Բացի այդ, հարթ տեղերում վաղը շատ անգամ փասվում և

գարնան ցրտերից: Չմրան ցրտերն էլ ավելի շատ փասում են տափարակի այգիներին, քան՝ լանջերին:

Խոր ձորերի կամ գետերի հովիտները, թեև շատ պարարտ հող են ունենում, բայց այն պակասութիւնն ունեն, վոր այստեղ օրվա ընթացքում արևի ազդեցութիւնը շատ կարճ է լինում, ուրեմն և ստացվում է ցածր փրակի բերք:

Այսպիսով՝ խաղողի այգու համար տեղ ընտրելիս ամենից առաջ պետք է նկատի առնել սահմի ազդեցութիւնը և ընտրել այնպիսի դիրք ունեցող տեղ, ուր հնարավոր լինի այդ ազդեցութիւնը մեծ չափերով ոգտագործել:

Մի հանգամանք էլ պետք է անպայման ի նկատի ունենալ: Մեզնում սովորութիւն է դարձել խաղողի այգիներին միջնալններում պաղատու ծառեր տնկել: Այս բանը շատ վատ ազդեցութիւն է ունենում խաղողի վրա, մանավանդ յեթե տնկված ծառերն ընկույզի, ծիրանի, սալորի և նման սովերաշատ ծառեր են: Այս ծառերը բռնելով մեծ տաքածութիւն և սովեր ձգելով խաղողի վրա, փասում են վաղի պտղակալութիւնը, զրկում են լույսից, ջերմութիւնից և այդպիսով փչացնում խաղողի հատկութիւնը: Զուր չէ ժողովրդական առածն ասում, թե՝ «միրութեամբ մարդուն չպետք է այգի թողնել»:

Ավելի նպատակահարմար և մինչև իսկ կարևոր է պտղատու ծառեր տնկել խաղողի այգու շրջապատում և այն մասերում, ուր վորեւ պատճառով հնարավորութիւն չկայ վաղ տնկելու:

Չափազանց կարևոր և անհրաժեշտ է, վոր խաղողի այգու ծառեր տնկվեն այգու հյուսիսային և հյուսիս-արեւելյան կողմերում, վորովհետև այդ ձևով այգին պաշտպանված կլինի հյուսիսային ցուրտ քամիներից, վորոնք հաճախ փասնեն և հաւցնում խաղողի վազերին: Բացի այդ, նրանք առնառարակ այգին պահպանում են սառ-

տիկ քամիներէց, փորոնք մեղանում շատ հաճախ են լինում գարնան և ամառվա ընթացքում:

III. ԱՅԳՈՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խաղողի այգու ամենից կարևոր աշխատանքներից մեկն է փորելը կամ վարելը: Այգին փորելու նպատակն է,—

1. Պահպանել հողի միջի խոնավութիւնը և փխրութիւնը:

2. Յենթարկել հողը հողմնահարութեան, այսինքն՝ այնպես անել, փոր հողը միշտ փխրուն լինի և նրա միջի սնունդատու նյութերը հեշտութեամբ լուծվեն ջրի մեջ: Ուրիշ խոսքով այգին փորելով մենք բարձրացնում ենք բերրութիւնը:

3. Հեշտացնել ոգի մուտքը դեպի հողի խորքերը, վերտեղ արմատներն են գտնվում, փորակաւ նրանք բավարար չափով ոգ ծծեն:

4. Մաքրել հողը մոլախոտերից (անպետք բույսերից), փորոնք հողից խլում են վաղի համար անհրաժեշտ սնունդը և խոնավութիւնը, իսկ առանց խոնավութեան սնունդ ստանալ վաղի արմատները չեն կարող:

Այս բոլորից պարզ է, փոր մշակելու այն ձևերը, փոր ընդունված են մեղանում՝ ամենևին թուլատրելի չեն: Մեր խաղողի այգիները փորվում են 2—3 տարին մի անգամ և մոլախոտերի բացարձակ մի վայր են ներկայացնում: Կան այգիներ, փորոնք ավելի շուտ խոտհարքներ են, քան՝ խաղողի այգիներ: Յերկար ժամանակ չփորվելով, մեր այգիները սովորաբար ծածկված են լինում բազմաթիվ անպետք և վնասակար խոտերով, չափազանց խորը արմատ ձգող աւվուլյոսով և մատուցողով, հողը ցանցով պատող չիմխոտով (չայիրով) և վազերի վրա փափաթվող պատուտակով: Այս բոլորը շարունակ հողից խլելով խոնավութիւնը և սննդարար նյութերը մեծ չափերով պա-

կասեցնում են մեր այգիների բերքը և թուլացնում խաղողի վազը:

Մեղանում այս ձևի մշակութիւնը կապված է խոշոր ծախքերի հետ, փորովհետև գոյութիւն ունեցող թումբերի ձևը հնարավոր է դարձնում միայն բահով կատարելու աշխատանքը, մինչդեռ կան այգիներ անկելու ուրիշ ձևեր, փորոնք մասին մենք հետո կխոսենք, ուր հնարավոր է փորը կատարել գութանով և այգալիսով շատ ու շատ եժանացնել այդ աշխատանքը:


Փորել պետք է ինչքան կարելի յետևոր և վաղ գարնանը, քանի դեռ չեն բացվել աչքերը, այգու ետը կամ կտրելով վերջանալուց հետո: Կարելի յետևոր և աշնանը, այգեկութիւն վերջանալուց հետո: Բայց մեղանում այդ հնարավոր չէ, փորովհետև այդ դեպքում պետք է այգին ետել կամ կտրել աշնանը, իսկ աշնան կտրած այգին կարող է մեր ձմրան ցրտերին չդիմանալ: Այն յերկրներում, ուր ձմեռը մեղմ է լինում, սովորաբար այգիները ետում են աշնանը կամ մինչև իսկ ձմրան ամիսներին: Փորելու ժամանակ շատ կարևոր է վազը մաքրել հողի վերի մասերում առաջացած արմատներից, փորոնք վաղի բնի վերևի մասերից են առաջանում և վնասում են խորի արմատներին, զարգանալով ի հաշիվ այդ արմատների և թուլացնելով նրանց:

Յիթե վազը այդ արմատներից չմաքրենք, նրանք արագութեամբ կչորացնեն հողի վերին շերտերի խոնավութիւնը և ջրի պակասութեան դեպքում՝ վազը չի դիմանալ յերաշտին: Բացի այդ, վերևի արմատները կտրելով՝ նպաստում ենք հողի խորքում գտնվող արմատների ու ժեղանալուն և ավելի խորանալուն, այգալիսով հնարավորութիւն ենք տալիս վազին, ջրի պակասութեան ժամանակ, խոնավութիւն ստանալ հողի խորքերից:

Ամառվա ընթացքում պետք է յերկու-յերեք անգամ թորխններով, շաթաներով կամ ձեռքի ուրագներով թոր-

խել հողը մոլախոտերը վռնչացնելու և հողը փխրուն պահելու համար:


Փորը մեզանում անում են բահերով: Ուրիշ յերկրներում, ուր խաղողի վազերը թմբերի վրա չեն, ինչպես



Նկ. 1

3 վերջով խորությամբ վարող «Գեն»-ի գութանը:

մեզնում, այլ տնկված են կանոնավոր շարքերով, այդիները մշակում են թեթև գութաններով (տես Նկ. 1 և 2): Գութանի վարն այն առավելությունն ունի, վոր չափազանց արագացնում և եփանացնում է աշխատանքը: Այսպես որ, մեզնում մեկ դեսյատին այգու փորելը նստում է




Նկ. 2

խաղողի շարքերի մեջ կը վարող «Մակկ»-ի թեթև գութանը:

այս առավելությունները չափազանց կարևոր և անփոխարինելի պետք է համարել մեր այգեգործության արդյունավետությունը բարձրացնելու խնդրում: Նույնպես թանգ է

նստում մեզ վրա և ամրան ընթացքում թորխելու աշխատանքը: Ուրիշ յերկրներում այդ աշխատանքը նույնպես ձիու ուժով են կատարում: Այդ նպատակի համար գործ են ածում կուլտիվատոր կոչվող գործիքը, վորն անցնելով վազերի շարքերի միջով 10—15 սանտիմ (1—2 վերջով)



Նկ. 3

կուլտիվատոր:

խորությամբ փորում է հողը, վռնչացնելով մոլախոտերը և անչափ եփանացնելով աշխատանքը: (Տես Նկ. №3):

Այս ձևերով մշակելով խաղողի այգիները, մենք վոչ մի «յն» եփանացրած կլինենք աշխատանքները, այլ և կըրկնակի չափերով բարձրացրած մեր այգիների բերքը:

IV. ԵՏԵԼԸ ԿԱՍ ԿՏԵԼԸ

Ցեթե խաղողի վազը թորենք, ինչպես ասում են, իրան գլխու, նա կսկսի յերկարել, բազմաթիվ ճյուղեր տալով փաթաթվել ծառերին կամ փռվել գետնին: Այդպիսի վազի խաղողը լինում է մանր և վատ վորակի: Ծտելը և վազին վորոշ ձև տալը անհրաժեշտ է նրա կանոնավոր զարգացման և պտղաբերության համար:

Կանոնավոր ետելու համար նախ՝ պետք է հմտություն ունենալ և ապա՝ իմանալ հետեյալը.—

1. Կտրելով մատի մի մասը, մենք ստիպում ենք, վոր արմատների և տերևների միջոցով գոյացած հյութերը

մեան մատի չկտրած մասում և այդպիսով ուժեղացնում ենք աչքերից դուրս յեկող շիվերի աճեցողությունը:

2. Յեթե մատի միջի հյուսթերը շարժվում են առանց արգելքի՝ շիվերը զարգանում են ուժեղ կերպով, բայց պտուղը պակասում է: Ընդհակառակն, յեթե հյուսթերի շարժումը մատի մեջ ազատ չէ՝ շիվերը համեմատաբար թույլ են զարգանում, բայց հեշտությամբ են բերք տալիս:

3. Ինչքան ուղղահայաց ե (դիք, ցից) մատը, այնքան ավելի ուժեղ ե նրա աճեցողությունը, այնքան շատ ե յերկարում նա, բայց պտուղ քիչ ե տալիս: Ընդհակառակն, ինչքան մատը թեք ե լինում, կամ ինչքան նա մոտենում ե պարկած դրության, այնքան թույլ են աճում շիվերը, բայց ավելի յեն պտուղ տալիս:

Այս որոնքները պետք ե իմանա մենք մի ետող: Յեթե նա կամենում ե ուժեղացնել բերլը, պետք ե մատին ավելի թեք ուղղություն տա, իսկ եթե կամենում ե ուժեղացնել շիվերը, պետք ե մատին ուղղահայաց ձև տա:

Մատերի կռացնելը կամ ողակաձև կապելը՝ կատարվում ե պտուղը շատացնելու նպատակով: Կարելի յե պտուղը շատացնել նաև շատ մատեր և շատ աչքեր թողնելով: Ինչքան շատ աչքեր թողնենք մատի վրա, այնքան շատ կլինի բերքը, բայց այնքան թույլ կլինի շիվերի աճեցողությունը և ընդհակառակն: Բայց չպիտի մոռանալ, վոր չափից դուրս պտղաբերությունը թուլացնում ե վազը, իսկ վազի թուլանալն ազդում ե ապագայի բերքատվության վրա:

Այս բոլորից յերևում ե, վոր ետելու նպատակն է՝ պահպանելով ամբողջ վազի և նրա բոլոր մասերի կենսունակությունը — կանոնավորել նրա պտղաբերությունը, այսինքն՝ այնպես անել, վոր վազը ամեն տարի տա միևնույն քանակությամբ և միևնույն վորակի (տեսակի) բերք:

Մեզանում այդետերերը, իսկ սրանցից մանավանդ նրանք, ովքեր մասով են տալիս այգին, կամ իրենք ան-

միջական հսկողություն չեն ունենում, այգին ետում են շատ անկանոն: Թողնելով վազի վրա մեծ քանակությամբ մատեր, առանց աչքի առաջ ունենալու վազի ուլժը, նրանք, ճիշտ ե, ավելացնում են բերքը, բայց 2—3 տարվա ընթացքում այնքան են թուլացնում վազը, վոր այլևս բերք ստանալու հնարավորություն չի լինում:

Շար լինում ե յերկու տեսակ՝ կարն և յեկար: Յեթե մատի վրա թողնվում ե 3—4 աչք, սա կարճ ետ ե, իսկ յեթե աչքեր թողնվում են ավելի, կոչվում ե յերկար ետ: Յերկար կամ կարճ ետելը կախված ե խաղողի փոփոխակից (տեսակից): Այն փոփոխակները, վորոնք ուժեղ զարգացող շիվեր են տալիս, ինչպես որ. հաչաբաշը, պետք ե յերկար ետել, իսկ նրանք, վորոնց մատերը թույլ են աճում պետք ե կարճ ետվեն:

Մեզանում ետը պետք ե կատարել զարնանը: Ինչքան շուտ ե կատարվում ետը, այնքան շուտ են բացվում աչքերը: Այս հանգամանքն ի նկատի առնելով, պետք ե աշխատել ետը կատարել հնարավորության չափ ուշ, վորովհետև մեզնում մինչև ապրիլի վերջերը ցրտահարություններ հաճախ են լինում և շուտ բացված աչքերը կարող են դարնան ցրտերից վնասվել: Չպետք ե նաև շատ ուշացնել, վորովհետև այդ դեպքում այգին փորելը ուշանում ե: Ուշ ետել կարելի յե այն այգիները, վորոնք վորևե պատճառով չեն փորվելու նույն դարնան: Մեզնում ետելու ամենից հարմար ժամանակը պետք ե համարել՝ սկսած մարտի կեսերից մինչև ապրիլի կեսը:

V. ՎԱԶԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Խաղողի վազին տալիս են զանազան ձևեր: Մեզանում ընդունված ե ցածր բնով, զետնատարած անկանոն ձևը: Գետնատարած ձևավորումն այնպես, ինչպես մեզ մոտ ընդունված ե, ունի յուր դործնական նշանակություն:

նը և դա կապված է գլխավորապես ձմրանը թաղելու հետ: Բայց այդ ձևն ունի մեծ պակասություններ: Այդ թերություններից, ինչպես տեսանք, ամենից կարևորն՝ այդու մշակութային զգվարություններն են և նրա չափազանց թանկ նստելը: Բացի այդ, մեզնում ընդունված ձևավորման թերությունը նաև այն է, վոր զգվարացնում է վազի բժշկությունը, բերքի ժողովելը և մի շարք ուրիշ աշխատանքներ: Այսպես որ, մեզնում մի բանվորն որմալընթացքում հազիվ է կարողանում 20—25 փութ խաղող ժողովել, մինչդեռ որ, շարքային ձևավորման դեպքում՝ հնարավոր է մինչև 50—60 փութ ժողովել:

Մի ուրիշ և կարևոր թերություն էլ այն է, վոր մեզնում մեծ մասամբ թմբերը, վորտեղ գտնվում են վազի թփերը, իրարից չափազանց հեռու յեն գտնվում: Կան այգիներ, ուր թումբը թմբից յերկու և կեսից մինչև իսկ յերեք սաժեն հեռավորության վրա յեն գտնվում և այդպիսով այդու վազերի արանքներում գոյանում են ահագին բաց տարածություններ: Այս հանգամանքը յուր նշանակությունն ունի այդու արդյունաբերության համար և սա պետք է մեր, այսպես ասած՝ թմբային այգեգործության կարևոր թերություններից մեկը համարվի:

Յերբ խոսում ենք այս կամ այն ձևավորումը տալու մասին, դարձյալ պետք է ի նկատի ունենանք այդու հողային և կլիմայական պայմանները: Հարուստ և շատ խոնավություն ունեցող հողերում, ուր նկատվում է վազի ուժեղ դարգացում, պետք է ստիպված լինենք վազը մեծացնել, վորպեսզի կարելի լինի ապահովել բերքը: Փոքր թփերն այդպիսի հողերում չափազանց ուժեղ չիվեր կտան ի վնաս պտղաբերության: Աղքատ, չոր և դուրս (խրճոտ) հողերում, ընդհակառակն, վազի թփերը պետք է փոքր լինեն, վորպեսզի թույլ չմնան և նորմալ աճեցողություն ունենան:

Հարուստ և խոնավ հողերում խաղողի թուփը պետք

է աշխատել բարձր ձևավորել, իսկ աղքատ և չոր հողերում՝ ընդհակառակը: Յածր ձևավորումը մեզնում կարեւոր է նախ այն պատճառով, վոր մեր հողերը մեծ մասամբ խոնավություն բիչ ունեն, ապա վողկույզները մոտ լինելով գետին՝ շուտ են հասունանում և լավ վորակ են ունենում: Այս կամ այն ձևավորումը տալիս պետք է ի նկատի ունենալ խաղողի այգու մշակութային հեշտացումը և եժանացումը:

Այս բոլորից հետո, կանգ առնենք վազի ձևավորման յերկու տեսակի վրա, վորոնք շատ տեղերում ընդունված են և կարող են մեզնում ել հաջողությամբ դործադրվել:

Ափսեյանման ձևավորում: Ափսեյանման ձևավորման համար վազի բունը կարող է բարձր կամ ցածր լինել: Մեզնում ավելի նպատակահարմար է ցածր կամ կարճ ձևավորումը, վորովհետեւ բարձր բուն ունեցող թփի ձմրան թաղելը կապված է զգվարությունների հետ, մինչդեռ ցածր բնով վազերը ավելի հեշտությամբ կարելի յե


թաղել՝ ձմրան սառնամանիքներից պաշտպանելու համար: Այս տիպի ձևավորման հենց անունը ցույց է տալիս, վոր վազի թևերը հենց սկզբից և յեթ այնպես են կտրվում, վոր ափսեյի ձև ունենան: Չև տալու ժամանակ մատերը պետք է այնպես կտրվեն, վոր իրար վրա չգան, այլ իրարից հավասար հեռավորության վրա գտնվեն, հակառակ դեպքում՝ կստացվի վոչ թե ափսե, այլ անկանոն մի ձև:



Նկ. 4

Ափսեյանման ձևավորում:

Ափսեյանման ձևավորումն ունի մի շարք հարմարություններ: Լույսը և ուրեք ազատ մուտք ունեն դեպի պը-



տուղները կամ վողկույզները: Հողի ջերմությունը հեշտությամբ և անցնում վազին, իսկ այդ հանգամանքը, ինչպես տեսանք, մեծ նշանակություն ունի բերքի վորակի համար: Լավ և, յեթե բունը ունենա վոչ ավել քան 10—15 սանտիմ (4—5 վերշուկ) բարձրություն (տես նախորդ յեր. նկ. 4): Մեր չորային կլիմայական պայմաններում այս ձևը բավարար հետևանքներ կտա:



Նկ. 6

Յերկու տարեկան տունկ:
(Կետերը ցույց են տալիս, թե վորտեղից պետք է ետել):

Ափսեյանման ձևավորում տալիս են հետևյալ յեղանակով.—մեկ տարեկան արմատակալած ջահել տունկի վրա թողնում են ամենից ուժեղ մասը, վորը հենց նույն գարնանն ետում են՝ թողնելով միայն 2 աչք (տես նկ. 5): Հետևյալ գարնանն ետելու ժամանակ, նախորդ տարվա մատերից մեկի վրա թողնում են ներքևի մեկ աչքը, մյուսի վրա՝ 2 աչք (տես նկ. 6):


Այսպիսով, յերկրորդ ետից հետո վազի վրա թողած յերեք աչքերը շիվեր են տալիս յերեք տարբեր ուղղությամբ: Այդ մատերը յերրորդ գարնանը ետում են, թողնելով ամեն մի մատի վրա յերկու աչք (տես հաջորդ յերես, նկ. 7): Այսպիսով, յերրորդ ետից հետո վազն ունենում է 3 թև,



Նկ. 5

Մեկ տարեկան արմատակալած տունկ:

վորոնց վրա թողած մատերի աչքերից 6 շիվ և առաջ գալիս (տես նկար 8) և վազը վերջնական ափսեյանման ձևավորումն է ստանում:



Նկ. 7

Նոր տունկի յերրորդ տարվա ետն՝ ափսեյանման ձևավորման համար:

Նույն ձևավորումը կարելի յե տալ վազին մի ուրիշ յեղանակով: Դրա համար յերկրորդ տարվա ետի ժամանակ



Նկ. 8


Չորրորդ տարվա ափսեյանման ձևավորված վազի տունկ:

10—15 սանտիմ (4—5 վերշուկ) բարձրության վրա բունը կտրում են սղոցով, վորից հետո բնի քնած աչքերից առաջ են գալիս մի շարք շիվեր: Այդ շիվերից թողնում են

տարբեր ուղղությամբ զարգացած միայն յերեքը, ավելի ուժեղները, վորոնք կազմում են վազի թևերը, Թուփն այսպիսով ստանում է ավսեյի ձև։

Ձևավորման այս յեղանակն է միջի այլոց շատ տարածված է Ղրիմի հարավային մասերում։ Տնկված լինելով կանոնավոր շարքերով, իրարից վորոշ հեռավորության վրա, առանց վորևե թմբերի, այստեղ հնարավոր է լինում մշակությունը գութանով և կուլտիվատորներով կատարել, արագացնելով, հեշտացնելով և վոր գլխավորն է՝ եփանացնելով բոլոր աշխատանքները։

Շատ անգամ ավսեյանման ձևավորում տալիս են վազին, թողնելով բունը շատ կարճ, այնպես, վոր թևերը սկսվում են հենց գետնի յերեսից (տես նկար 9)։ Բայց





Նկ. 9

Ավսեյանման կարճ
ձևավորում։

այս ձևը մեղմում պետք է համարել աննպատակահարմար, վորովհետև նրանք գետնին մոտ լինելով՝ կարող են շատ հեշտությամբ զարնանը ցրտահարության յենթարկվել։

2. Շարքային ձևավորում բոս Գյուլյոյի։ Այս յեղանակով ձևավորելու համար վազի վրա թողնում են 1 կամ 2 յերկար մատ, ամեն մի մատի վրա թողնելով 8—12 աչք։ Յեթե վազի վրա թողնում են 1 մատ, այդ դեպքում ձևավորումը կոչվում է միակողմանի Գյուլյո, իսկ յեթե թողնում են 2 մատ՝ կոչվում է կրկնակի Գյուլյո։ Բացի յերկար ետած մատից, վազի վրա


կամ՝ «ճկուլթ»։ Յեթե վազին տալիս են միակողմանի Գյուլյոյի ձևավորում, այդ դեպքում թողնում են 2 մատ և 2 ճկուլթ (տես նկ. 10)։



Նկ. 10

Ձևավորում բոս «Գյուլյոյի»։

վազերը տնկում են կանոնավոր շարքերով և իրարից վորոշ հեռավորության վրա։ Թփի կարճ բնի վրա, ինչպես ասացինք, թողնում են մեկ կամ յերկու պտղատու մատ և նույնքան ճկուլթ՝ հետևյալ տարին փոխարինելու համար։ Յերկար մատերը 8—12 աչքերով կուսնում են և



Նկ. 11

Միակողմանի «Գյուլյո» յերկաթաթելերի վրա։

հորիզոնական ուղղություն տալով՝ հողից 10—15 սանտիմ բարձրության վրա՝ կապում են հատուկ ցցերից, կամ յերկաթե թելերից (մավթուլից)։ (Տես նկարներ 11 և 12)։

Կարճ մատերից կամ ճկույթներից դուրս յեկած շիվերին տալիս են ուղղահայաց (դիք) ուղղութիւնն և կապում են ցցերից, վորպեսզի նրանք ուժեղ զարգանան (տես հաջ. յեր. նկ. 13): Հետեյալ տարվա գարնանն ետելու ժամանակ, նախորդ տարվա կոացրած պտղատու մատը տակից կտրում և հեռացնում են, իսկ ճկույթի աչքերից գոյացած մատերից մեկն ետում են յերկար 8—12 աչքի վրա՝ պտուղ ստանալու համար և նույն ձևով կոացնելով՝ կապում, իսկ մյուսն ետում են 2 աչքի վրա «փոխարինող ցողուն» կազմելու համար:



Նկ. 12

Խաղողի վազը՝ ձևավորված «Գյուլոյի» յեղանակով:

Ձևավորման այս յեղանակն ունի մեծ առավելութիւններ: Բացի մշակութայն հեշտ և եժան լինելուց, հեշտանում է նաև այգու բժշկութիւնը. բանվորը յուր ապարատով շարք-շարք սրսկելով անցնում է Սուղը տալը, բերք ժողովելը, ձմրան թաղելը, ջրելն այս բոլոր աշխատանքներն անհամեմատ ավելի թեթևանում և մաքուր են կատարվում:

Ըստ Գյուլոյի ձևավորելու համար գործ են ածում հատուկ փայտե ցցեր կամ փայտներ 2 և կեսից-3 մետր յերկարությամբ, կամ թե՛ վազերի ամեն մի շարքում




Նկ. 13

ճկույթից առաջացած մատերը:

անց են կացնում 3 շարք յերկաթալարեր (տես հաջ. յեր. նկ. 14)՝ մատերը և շիվերը կապելու համար: Մատերը կապել կարելի յե սովորական ուռով (վորից մեզնում քթոց են գործում), վորը հեշտությամբ աճում է առունների ափերին և ամեն մի այգետեր կարող է ունենալ ցանկացած չափով:

Ճիշտ է, անհրաժեշտ քանակությամբ ցցեր ձեռք բերելը բավական թանգ արժե: Ավելի թանգ է նստում յերկաթալարեր ձեռք բերելը, սակայն յեթե ինկատի ունենանք, վոր մի անգամ անցկացրած յերկաթալարերը



Նկ. 14

Յերկաթալարերի շաբերը:

կամ ձեռք բերած ցցերը ծառայում են 8-10 տարի, կտենենք, վոր այդ ծախսը, համեմատած այժմյան ամեն տարի կատարվող անիմաստ ծախսերի հետ՝ աննշան է: Ինչ վերաբերում է ցցերին, ապա ամեն մի այգետեր ցանկացած դեպքում հնարավորություն կունենա անհրաժեշտ քանակությամբ ձեռք բերել հենց յուր այգուց: Բավական է այգու վորևե ազատ մասում ակացիայի սերմեր ցանել և 4—5 տարուց հետո կստացվի բավականաչափ լավ ցցեր:

Շատերը կարող են կարծել, թե շաբալին ձևավորումը կխանգարի այգիների ձմրան թաղելուն, բայց այդ սխալ է, վորովհետև բնի կարճ ձևավորումը միշտ հնարավոր է դարձնում հեշտությամբ կատարել այդ աշխատանքը:

VI. ԱՄԱՌՎԱ ԽՆԱՄՔԸ

Վաղի վրա զարգացող շիվերը բոլորն էլ պտղատու չեն լինում: Նրանցից շատերը վոչ միայն անպտուղ են լինում և հաջորդ տարվա համար անպետք, այլև առաջ

գալով մնասում են պտղատու մատերի զարգացման՝ խլելով նրանցից հյութերի մի մասը:

Այդ պատճառով նման անպետք շիվերի հեռացնելն՝ ամառվա կարևոր աշխատանքներից մեկն է հանդիսանում: Ամրան խնամքը՝ սուղը կամ բիճը տալն է. ծայրահատուկ թյան կամ ծերատման, բնամատերի կամ հոռամատերի հեռացնելն է և մի բանի ուրիշ աշխատանքներ են:

Գարնանից սկսած վաղի վրա, բացի պտղատու շիվերից, առաջ են գալիս շատ ուրիշ անպտուղ շիվեր, վորոնց պոկելը և հեռացնելը շատ անհրաժեշտ է: Այդ ավելորդ շիվերը լավ կլինի հեռացնել հենց գարնանից, յերբ նրանք սկսում են զարգանալ աչքերից: Այդ ժամանակ նրանք հեշտությամբ կոտորվում են և դժվար չե վազընըրանցից մաքրել: Դրանց թվին են պատկանում վաղի բնի զանազան մասերում քնած աչքերից առաջ յեկած շիվերը, վորոնք բնամատեր են կոչվում: Սրանց հեռացնելու աշխատանքն ուղացնելու դեպքում, գործը բավական դժվարանում է, վորովհետև ամրան սկզբին այս շիվերը այնքան են ամրանում, վոր ալևա ձեռքով չեն կոտորվում և կարիք է լինում այգու մկրատով կտրել և հեռացնել:

Շատ հաճախ պտղատու մատերի աչքերի ամեն մեկից յերկու, մինչև իսկ յերեք շիվ է առաջ գալիս: Այս դեպքում պետք է աչքից դուրս յեկած շիվերից թողնել միայն մեկը, իսկ մյուսները պոկել կամ կտրել զգուշությամբ, վորպեսզի մնացող շիվը չմնասվի: Պարզ է, վոր այդ շիվերից պետք է թողնել այն, վորի վրա խաղող կա, իսկ յեթե նրանցից վոչ մեկի վրա խաղող չկա, թողնել պետք է ամենից ուժեղ շիվը (տես հաջ. յեր. Նկ. 15):

Նոր դուրս յեկած շիվերի տերևների արանքից, մանավանդ յեթե նրանք պառկած են, դուրս են գալիս միշտ յերկրորդական շիվեր, կամ ինչպես ասում են՝ բիճեր, վորոնք նորից թուլացնում են մատը և խլելով նրանից



Նկ. 15

Ավելուղ շիվերի հեռացնելը

հյուսիսի մի մասը, չեն թողնում, վոր պտուղը լավ հասնի և մատը ուժեղանա: Այս յերկրորդական շիվերը պետք է հեռացվեն սկզբից և յեթ, քանի նրանք դեռ չեն փայտացել, հակառակ դեպքում՝ աշխատանքն ավելի կդժվարանա:

Վորպեսզի ծաղիկները չթափվեն և լավ պտուղ բերեն, շատ անգամ կարիք է լինում ծայրահատություն կատարել կամ, ինչպես ասում են, մատերը ծերատել: Այդ դեպքում կտրում են պտղատու մատի ծայրը կամ ծիլը, վորի շնորհիվ մատն այլևս չի յերկարում և նորմալների ու տերևների միջոցով ստացված հյութերը կերակրում են պտուկներին՝ ուժեղացնելով նրանց: Ծաղիկների թափվելու դեմ կատարվող ծերատումը պետք է արվի հենց ծաղկման ժամանակ, հակառակ դեպքում ծերատումը նպատակին չի ծառայի:


Բայց այս աշխատանքն այն պակասությունն ունի, վոր ծերատած մատերը նոր բիճեր յեն տալիս և կարիք է լինում նորից մի քանի անգամ սուղը տալ կամ բճատել: Ծայրահատությունը լավ է կատարել միայն այն դեպքում, յեթե ծաղիկները թափվում են և պտուղը լավ չի գոյանում, հակառակ դեպքում՝ ծերատումը ավելորդ աշխատանք է: Ծերատել հարկավոր է նաև այն շիվերը, վորոնք սկսում են չափազանց յերկարել:

Շատ անգամ կարիք է լինում նաև տերևները նորացնել (սեյրակացնել):

Այս աշխատանքը մեզնում պետք կատարել՝ սկսած հուլիսի վերջերից, յերբ խաղողը արդեն մոտ է հասունանալուն և պիտի հեռացնել գլխավորապես այն տերևները, վորոնք շվաք են անում խաղողի վողկույզներին (ճթերին): Տերևները նոսրացնում են, վորպեսզի լույսի և արևի անմիջական ազդեցությունը պտուկների վրա ուժեղանա և խաղողը լավ հասունանա ու քաղցրանա: Յեթե վաղի թփի վրա տերևները և մատերը խիտ չեն նստած և վաղը լավ է լուսավորված, այդ դեպքում նոսրացնելը միանգամայն ավելորդ է:

Ծաղիկների թափվելու առաջն առնելու համար շատ անգամ կատարում են նաև մի այլ աշխատանք, վորը կոչվում է ողակավորում: Այդ աշխատանքը հետևյալն է: Պտղատու մատի ներքևում, ծաղկելուց առաջ, մատի կեղևը ողակաձև կտրում և հանում են 1-2 մեխիմետր լայնությամբ այնպես, վոր մատի փայտը չմնասվի: Կեղևը պետք է կտրել սուր դանակով և շատ զգույշ, վորովհետև անփորձ աշխատողը կարող է հեշտությամբ վիրավորել և մնասել մատը: Մեզնում ողակավորում կատարելը վտանգավոր է, վորովհետև շիվերը ցցերից չեն կապվում և դարնան ուժեղ քամիները կարող են ողակավորած մատերը կոտրատել:

Ողակավորումը (տես հաջ. յեր. Նկ. 16) ունի և այնչա-



Նկ. 16

Ողակավորում:

նակությունը, վոր նպաստում է խաղողի հատիկների (գիւլաների) մեծանալուն և մոտ 2 շաբաթ շուտ է հասցնում խաղողը: Այս պատճառով ողակավորումը կարող է նշանակություն ունենալ գլխավորապես շուտ հասնող՝ դեռ սերտի (ալվան) խաղողների համար, ինչպես որ. խալիլին, յեզանդարին և այլն:

VII. Զ Ր Ե Լ Ը

Մեր յերկրի խաղողի այգեգործական շրջաններում, վորտեղ անձրևներ և ձյուն շատ քիչ են լինում, այսինքն՝ կլիմայական պայմանները չափազանց չորային են և սուք, վոչ միայն խաղողի կուլտուրան, այլև գյուղատնտեսության մյուս բոլոր ճյուղերը պահանջում են գարնան և ամառվա ընթացքում ջուր: Առանց ջրի մեր յերկրի տափարակը կլիներ մի անապատ: Վոռոգման կարիքը այնքան մեծ է, իսկ գոյություն ունեցող առուների քանակը այնքան քիչ, վոր մեր տափարակային շրջանի հողերի ահագին մասը մինչ այսօր ել մնացել է ամառի և անոգուտ: Շատ շրջաններում, թեև ջուր կա, բայց այնքան քիչ է, վոր չի բավարարում այգիներին, այդ պատճառով այգիները լավ չեն զարգանում, թույլ են մնում և առանձին ոգուտ չեն տալիս այգետերերին: Իսկ մեզ հայտնի է, վոր թույլ վազերը հեշտությամբ յենթարկվում են զանազան հիվանդությունների և ցրտահարության, մինչդեռ առողջ և ուժեղ վազերը հաջողությամբ կարողանում են դիմանալ զանազան հիվանդությունների և մինչև իսկ ձմրան սաստիկ ցրտերին: Բայց յեթե ջրի պակասու-

թյունը վատ հետևանքներ է տալիս, չպետք է իշարը դործ դնել և ջրի առատությունը: Չափից դուրս ջրելն ել ֆուսում է այգիներին այն տեսակետից, վոր թե վազերը և թե տարեկան մատերն սկսում են չափազանց ուժեղ զարգանալ ի ֆուս պտղաբերության և վազը յուր դիմացկանությունը ցրտերի և հիվանդությունների նկատմամբ՝ կորցնում է:

Ավելի ևս վտանգավոր է աշնան, մանավանդ ուշ աշնան ջրելը:

Մեր այգետերերից շատերը, առանց հաշվի առնելու հետևանքները, այգիները ջրում են բերքը ժողովելուց մի քանի որ առաջ՝ պտուղը լավ լցնելու նպատակով, կամենալով այդպիսով բերքն ավելացնել: Զրեւու այս սպեկուլյատիվ յեղանակը, վորը, ճիշտ է, բավականին ավելացնում է բերքը, միանգամայն անթույլատրելի յե, վորովհետև այդ ժամանակ վազն ամենևին ջրի կարիք չի զգում:

Ավելորդ ջուր ծծելով, վազի մատերը լրիվ չեն հասունանում, չեն փայտանում ինչպես հարկավոր է, շատ ջուր են ունենում իրենց մարմնի մեջ և աչքերում: Հետևանքը լինում է այն, վոր ձմրան ցրտից նրանք ավելի հեշտությամբ են սառչում, վոչնչանում: Այս դեպքում շատ անգամ ձմրան թաղելն ել վոչ մի ոգուտ չի տալիս:

1924—25 թվի ձմրան սաստիկ սառնամանիքներից ֆուսովել են մեծ մասամբ այն այգիները, վորոնք այդ ձևով անհաշիվ ջրվել են: Յերեկանի Նորագեղի այգիները, ուր ջուրը բավական առատ է, ավելի շատ են ցրտահարվել, քան Դալմայինը: Ցրտահարվել են մինչև իսկ այն այգիները, վորոնք ձմրանը թաղված են յեղել:

Կանոնավոր զարգացած և յուր ժամանակին ջուր ստացած վազերը միայն կարող են տալ նորմալ բերք և դիմանալ թե զանազան հիվանդությունների և թե ձմրան սաստիկ ցրտերի:

Այգետիրոջ համար պետք է որենք լինի, վոր այգուն ցուլ պես և ցալ միմիայն քս կարիքի, այսինքն այն ժամանակ, յերբ հողը խոնավությունից բավականաչափ զուրկ է և յերբ վազի տերևները մուգ—կանաչ (կապտավուն) գույն են ստացել: Այլ խնդիր է, յեթե աշունը սաստիկ չորային է լինում, հողը բոլորովին չորանում է և վտանգ կա, վոր տերևները ժամանակից շուտ կարող են դեղնել և թափվել: Այս դեպքում միայն ջրելն անհրաժեշտություն է դառնում,

VIII. ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք տեսանք, վոր թե նվազ և թե չափազանց ուժեղ զարգացած վազերը քիչ են դիմանում ձմրան սառնամանիքներին: Բայց ցրտերին դիմանալը կամ չդիմանալը միայն ջրելուց կամ չջրելուց չէ կախված: Այդ դիմացկանությունը մեծ չափով կախված է նաև խաղողի փոփոխակից (տեսակից): Ընդհանուր առմամբ կարելի չէ ասել, վոր սև խաղողները ձմրան սառնամանիքներին ավելի լին դիմանում, քան սպիտակները: Սպիտակներից ել գինու խաղողները ավելի դիմացկուն են, քան այսպես կոչված ալվանները: Մեր գինու խաղողներից «խարշին» (կանաչկենի) և «ճիւղը» (թյուրքի—դոյրուղի) ամենադիմացկունները պետք է համարվեն: Սրանք առանց նկատելի զնասի դիմանում են մինչև 18 աստիճան ձմրան ցրտերին, մինչդեռ ալվանները, մանավանդ «ասկյարին», «յեղանդարին» և «քիշմիշները» այդպիսի ցրտերի չեն դիմանում: Ալվան խաղողները և յեվրոպական փոփոխակները (տեսակները), ինչպես որ. Մուսկատները, Ռիսլինգը, Սեմլյոնը և այլն, ինչպես յերևում է, 15 աստիճանից ավելի ցրտերից արդեն զնասվում են, իսկ ավելի խիստ սառնամանիքներին՝ ամենևին չեն դիմանում:

Մեր յերկրում, մասնավորապես Արարատյան դաշ-

տում, ցրտերը, ինչպես 1924—25 թիվը ցույց տվեց, հասնում են մինչև 20—22 աստիճանի, թեև այդպիսի ցրտեր լինում են շատ սակավ: Բայց 15—17 աստիճան ցրտերը մեղմում շատ սովորական յերևույթ են: Այդ պատճառով թե տեղական ալվան խաղողները և թե յեվրոպական փոփոխակները պետք է անպայման պաշտպանել ձմրան ցրտերից, թաղելով վազերը աշնան վերջերին: Բազմաթիվ դիտողությունները ցույց են տվել, վոր կանոնավոր և յուր ժամանակին բժշկված այգիներում վազերն ավելի լին դիմանում, քան այն այգիներում, ուր բժշկություն չի կատարվել, կամ՝ կատարվել է թերի: Պատճառը պարզ է: Հիվանդությամբ վարակված վազերը նվազում են ու թուլանում, իսկ մենք տեսանք, վոր թույլ վազերը չեն դիմանում ձմրան ցրտերին:

Նոր տնկված խաղողի այգիները, անկախ նրանից թե վորտեղ և ինչպիսի խաղողներ են տնկված, պետք է անպայման թաղել, վորովհետև նրանց շիվերն ուշ են զարգանում, թույլ են մնում, լավ չեն փայտանում, ուրեմն և չեն կարողանում դիմանալ մինչև իսկ 10—12 աստիճան ձմրան ցրտերին:

Մի հանգամանքի վրա նույնպես պետք է լուրջ ուղղություն դարձնել: Մեր այգիները թաղելու համար սովորաբար ուշ աշնան են ջրում և բոլորովին թաց հողով ծածկում: Թաց հողով, ի հարկե, ավելի լավ է ծածկվում վազը, քան չոր հողով: Մի կողմ թողնելով այն, վոր աշնան ջրելը առհասարակ բացի զնասից վոչ մի ոգուտ չի տալիս, պետք է ասենք, վոր ուշ աշնան ջրելու հետ միասին սովորաբար մեղմում սկսվում են սառնամանիքները և թաց գետինը սառչում է ամբողջ խորությամբ:

Վազերի վրա դրված թաց հողը նույնպես սառչում է և այդպիսով վազն ընկնում է մի տեսակ սառուցով պատած տեղ: Թե վազն ինքը, թե նրա վրայի տարեկան մատերը և թե մանավանդ աչքերն այդպիսով ավելի վատ

պայմանների մեջ են ընկնում, քան յեթե թաղված չլինեյին: Այս աննպաստ հանգամանքները վերացնելու համար ավելի նպատակահարմար է այգին թաղել չոր, կամ՝ գոնե կիսաչոր հողով, վորի շնորհիվ թաղած վազն ավելի նպաստավոր պայմանների մեջ կլինի: Հաճախ է պատահել, վոր թաղած այգիներն ավելի շատ են ֆլատավել ձմրան սառնամանիքներից, քան չթաղածները: Այս յերևույթը կարելի յե բացատրել միայն հողի չափազանց թացությամբ:

Ինչքան վտանգավոր են մեզնում ձմրան ցրտերը, նույնքան և գուցե ավելի վտանգավոր են գարնան ցրտահարությունները: Գարնան ցրտահարությունը մեզնում դարձել է մի սովորական յերևույթ: Շատ քիչ տարի յե լինում, վոր գարունն առանց ցրտահարությունից անցնի: Յեղել են դեպքեր, յերբ գարնան ցրտերն այնքան շատ են յեղել և ուժեղ, վոր խաղողի բերքն ամբողջովին վռնչացրել են: Այս պատճառով, խաղողի այգիներն դարնա ցրտահարությունից պաշտպանելու խնդիրը՝ մեր այգեգործության ամենակարևոր հարցերից մեկն է:

Ինչքան գարնանը շուտ են բացվում վազի աչքերը, այնքան ավելի վտանգավոր են գարնան ցրտերը: Պարզ է, վոր մեր պայմաններում ձեռնառու յե, վոր աչքերը բացվեն ինչքան կարելի յե ուշ:

Այդ նպատակին հասնելու համար պետք է աչքի առաջ ունենալ հետևյալ դիտողությունները, վորոնք հիմնված են յերկար տարիների փորձերի վրա:

1. Գարնան ինչքան շուտ բացենք թաղած այգիներն, այնքան ավելի ուշ կը բացվեն աչքերը և այնքան գարնան ցրտահարության վտանգը քիչ կլինի: Այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր գարնանն արևի ազդեցության տակ հողն ավելի շուտ և ավելի շատ է տաքանում, քան ողր և վազը յերկար ժամանակ թաղված մնալով: հողի տաքության ազդեցության տակ՝ վազ է կենդանա-

նում: Շուտ բացելով այգին, մենք վազի կենդանալու համար ավելի աննպաստ պայմաններ ենք ստեղծում, քան հողի տակ թողնելով:

2. Ինչքան ուշ ետվեն այգիները, այնքան ուշ կը բացվեն աչքերը: Դիտողությունները ցույց են տվել, վոր ուշ ետված խաղողի վազի աչքերը բացվում են 10—15 օրով ավելի ուշ, քան յեթե շուտ է կատարվում ետը: Պատճառն այն է, վոր չետված վազերի մեջ հյութերն ամենից առաջ անցնում են մատերի ծայրերի աչքերին, իսկ ետելու դեպքում այդ հյութերն ուղղվում են թողած աչքերի մեջ և սկսում են վաղ կանաչել ու շրվեր արձակել:

3. Ինչքան վազի մատերը բարձր լինեն հողի յերեսից, այնքան նրանք քիչ կը ֆլատվեն գարնան ցրտերից: Բազմաթիվ դեպքեր են յեղել, յերբ գարնան ցրտերից ֆլատվել են զլխավորապես այն կանաչած մասերը, վորոնք գետնին ավելի մոտ են գտնվել: Իսկ այն մատերը, վորոնք գետնից բարձր են կամ ամենսին չեն ֆլատվում, կամ անհամեմատ ավելի քիչ չափերով են ցրտահարվում: Պատճառն այն է, վոր գետնի յերեսին ցուրտը միշտ ավելի ուժեղ է լինում, քան ողի բարձր մասերում: Նույնը նկատելի յե և ձմրան ցրտերի ժամանակ: Յերևանի ոգերևութաբանական կայանի դիտողությունները ցույց են տալիս, վոր մինչդեռ 1924—25 թվի ձմրանը գետնի յերեսին ցուրտը հասել էր 27 աստիճանի, մի արշին բարձրության վրա՝ ողի մեջ ցրտության աստիճանը 20 աստիճան է յեղել: Նույն տարբերությունը նկատվում է և գարնան օրերին, մանավանդ վաղ առավոտները:

Գարնան ցրտահարության դեպքում մեծ նշանակություն ունի նաև այգու դիրքը: Նկատված է, վոր լանջերում ցրտահարությունն ավելի քիչ է լինում, քան հարթ մասերում: Այս դիտողությունների վրա հենվելով, պետք է ասել, վոր վազի պտղատու մատերի բարձր լի-

ներքին մի կարևոր միջոց է դարձնան ցրտերն անվտանգ դարձնելու համար:

Վերջապես այդ շարքի դեմ կռվելու ամենալուրջ միջոցներից մեկն էլ պետք է համարել այգիներում ծուխ անելը: Այդ նպատակով խաղողի այգու դանազան մասերում վաղ դարձանից աղբակույտեր են պատրաստում, ամեն մի կույտը մոտ մի մետր բարձրությամբ, և յեթե ջերմաչափը ցույց է տալիս ցրտահարության վտանգ, այսինքն՝ յեթե ջերմության ստորիճանն իջել է գերոյի, կույտերը վառում են: Աղբակույտերը, վորը լավ կը լինի պատրաստել մի քիչ խոնավ գոմաղբից, շատ դանդաղ են վառվում և մեծ քանակությամբ ծուխ առաջացնում: Այդ ծուխը տարածվելով այգու վրա, շատ լավ պաշտպանում է նրան ցրտահարությունից: Գարնան ցրտահարության վտանգ լինում է պարզնկա գիշերներին:

IX. ԻՆՉ ԱՆԵԼ ՅՐՏԱՀԱՐՎԱԾ ԱՅԳԻՆԵՐԻ ՇԵՏ

Յեթե ձմրան ցրտերից վաղերը վնասվել են, պետք է միջոցներ ձեռք առնել այգին վերականգնելու: Ցրտահարվել կարող են տարեկան մասերի վրա գտնվող աչքերը: Այդ դեպքում վտանգն այնքան էլ մեծ չէ, Ցրտահարված աչքերի կողքերից, քնած աչքերից, դարձանը սովորաբար նոր շիվեր են դուրս գալիս, վորոնք շատ քիչ են բերք տալիս, կամ՝ ամենևին բերք չեն տալիս: Այդպիսի վաղերը լավ հսկողության և խնամքի դեպքում մի տարվա մեջ բոլորովին կազդուրվում են և հետևյալ տարին արդեն կանոնավոր բերք են տալիս: Ավելի վատ է, յերբ ցրտահարվում են վոչ միայն աչքերը, այլ և թևերն ու բունը, վորոնք շուտով սևանում են և հետո չորանում: Այս դեպքում դարձանը պետք է վաղի բունը հողի յերեսից սղոցով կտրել: Այդ ձևով կտրած վաղը հողի մեջ մնացած բնից շուտով բազմաթիվ նոր շիվեր է արձակում, վորոնք

ուժեղ կերպով զարգանում են, բայց, իհարկե, պտուղ չեն տալիս: Դուրս յեկած բոլոր շիվերը կարելի է չկա թողնելու: Բավական է նրանցից թողնել միայն յերեքը կամ չորսը, ջուկելով ավելի առողջները և ուժեղները, իսկ մյուսները հենց դարձանը պոկել և հեռացնել:

Հետևյալ տարին այդ շիվերից գոյացած մասերն ետում են՝ մի քանի աչք թողնելով ամեն մեկի վրա և այս կամ այն ձևը տալիս վաղին: Յերրորդ տարին այդպիսի վաղը կարող է պտուղ տալ, թեև քիչ քանակությամբ: Այդ վաղերից լավ բերք կարելի չէ ստանալ սկսած չորրորդ տարուց: Պետք է ասենք, վոր թեև ցրտահարությունը մեծ ֆուսս է հասցնում այգետիրոջ (նա զրկվում է 3 տարվա բերքից), բայց այգին վոչ միայն վերանորոգվում է այդ 3 տարվա ընթացքում, այլ և միանգամայն յերիսասարդանում է և այնուհետև յերկար տարիներ շատ լավ բերք տալիս:

X. ԽԱՂՈՂԻ ՆՈՐ ԱՅԳԻ ՏՆԿԵԼԸ

Մենք հենց սկզբում տեսանք, թե ինչպիսի հող և ինչպիսի տեղ պետք է ընտրել խաղողի այգու համար: Բայց ինչպիսի տեղ էլ վոր ընտրենք և ինչպիսի հող էլ վոր լինի, պետք է մի շարք կարևոր աշխատանքներ կատարենք ընտրած հողի վրա:


Ամենից առաջ պետք է այգու ամբողջ հողը հիմնաշրջել (պլանտաժ անել), այսինքն՝ վոչ պակաս քան կես մետր (12—14 վերշոկ) խորությամբ հողը պետք է շուռ տալ այնպես, վոր հողի յերեսի հարուստ և բերրի մասը ընկնի տակ, իսկ տակի աղքատ մասը վերև: Հիմնաշրջումն արվում է այն նպատակով, վորպեսզի տնկած խաղողի վաղի արմատները, վորոնք զարգանում են հողի խորքում, տարածվեն հողի հարուստ մասերում: Բացի այդ, հիմնաշրջման ժամանակ ջուկվում են թե բոլոր մեծ քա-

րերը, վորոնք ընկած են լինում հողի խորքերում և թե բազմաթիվ մոլախոտերի արմատները (չալեր, դամիշ և այլն), վորոնք մնալով հողի մեջ կարող են արագ զարգանալ և վնասել նոր այգուին: Այս պայմաններում վազն ստանալով մեծ քանակությամբ սննդարար նյութեր, լավ է զարգանում և ուժեղ ու առողջ է լինում: Հակառակ դեպքում, յեթե վազը տնկվում է հիմնաշրջված հողի մեջ, նա լավ զարգանալ չի կարող և կմնա նվազ:

Հիմնաշրջելու համար այգու տեղը բաժանում են 20—30 մետր լայնությամբ և 80—100 մետր յերկարությամբ տախտակների կամ հողակտորների: Ամեն մի տախտակը յերկարությամբ բաժանում են 2 հավասար մասի և մեկ մասի վերևից փորում են մի-մի շերտ կես մետր խորությամբ մեկ և կես մետր լայնությամբ, դուրս տալով ամբողջ հողը այնպես, վոր ստացվի մեկ և կես մետր լայնությամբ խոր առու: Այնուհետև փորում են յերկրորդ շերտը նույն լայնությամբ, վորի յերեսի հողը լցնում են բացած առաջին առվի տակը, իսկ տակի հողը լցնում են առվի յերեսը: Այնուհետև նույն ձևով փորում և շուտ են տալիս հետևյալ շերտերը, մինչև տախտակի մեկ և մյուս ծայրերին հասնելը: Յերբ ամբողջ տախտակի հիմնաշրջումն այս ձևով վերջացնում են, տախտակի առաջին մասի առվից դուրսացած հողը լցնում են յերկրորդ մասի փոսի մեջ՝ մեկ և մյուս ծայրերում (տես հաջ. յեր. նկ. 17): Հիմնաշրջման այս աշխատանքը վերջացնելուց հետո, հողը պետք է լավ հարթել կամ հավասարեցնել: Վերջացնելով մեկ տախտակը, նույն ձևով հիմնաշրջման են յենթարկում և մյուս տախտակները:

Հիմնաշրջում կատարելու ամենահարմար ժամանակը պետք է համարել աշունը, վորովհետև այդ ժամանակ հիմնաշրջված հողը մինչև գարուն նստում և հարմար է լինում այգի տնկելու համար:

Նոր այգի տնկելու համար սովորաբար գործ են ա-



Նկ. 17

Հիմնաշրջում (պլանում):

ծում մեկ տարեկան մատեր, վորոնք պատրաստվում են հին խաղողի այգիներից: Պետք է ջոկել ամենաառողջ և ուժեղ մատեր, վորովհետև թույլ և նվազ մատերը լավ չեն արժատակալում և մեծ մասամբ չեն բուսում: Ավելի լավ արժատակալում են այսպես կոչված՝ չառուչավոր մատերը, այսինքն նրանք, վորոնց վրա լինում է նախորդ տարվա մատի մի փոքրիկ կտորը: Պատրաստված մատերը պետք է լինեն վոշ պակաս քան կես մետր յերկարությամբ, լավ է, վոր մի քիչ ավելի յերկար լինեն և ապրիլից սկսած՝ տնկվում են հիմնաշրջված հողի վրա: Կարելի յե տնկել 2 ձևով, կամ անմիջապես իրենց տեղերում, այդ դեպքում տնկում են 2—3 մատ միատեղ, վորոնցից հետևյալ գարնանն ամենալավը թողնում են, իսկ մյուսները հանում, կամ թե այգու մի վորևե մասում տնկում են բոլոր մատերը շարքերով, շարք-շարքից կես մետր հեռավորության վրա, իսկ մատը-մատից 15—20 սանտիմ հեռավորությամբ: Այս տեղից արդեն հետևյալ գարնանը լավ բուսած և արժատակալած մատերը հանում են և տնկում իրենց տեղերում: Այս ձևով խիտ տնկած հողակտորը տնկարան է կոչվում:

Նախքան նոր այգի ձգելը, անպայման պետք է վորոշել, թե ինչ ձևով կամ սխառեմով պետք է լինի նոր այգին: Շարքերը պետք է չափված ու ձևված լինեն և վազերի տեղերը վորոշված: Տնկելու համար նախորդ վորոշված շարքերում յերկու բահի խորությամբ առուններ են բացում տախտակների լայնությամբ, ապա մատերը կամ մի տարվա արմատակալած առնակներն իրենց տեղերում դնելով, հողը լցնում են և լավ կոխըրձում: Մատերը պետք է անկել այնպես, վոր հողի ներսում մնա նրա յերեքքառորդ մասը, իսկ հողից դուրս մի քառորդ մասը, կամ վոչ ավել՝ բան յերկու աչք: Լավ է, յեթե դրսում մնացած մասի բուկը լցվի հողով:

Թե նոր տնկած այգին և թե տնկարանը պետք է ջրել շուտ-շուտ, 7—10 որը մի անգամ, մինչև վոր տընկած մատերը լավ կանաչեն: Այնուհետև կարելի յե ջրել քստ կարիքի: Նոր տնկած այգում կամ տնկարանում չպետք է թողնել, վոր հողը կեղև կազմի և ժամանակ առժամանակ պետք է թորխել ձեռքի թորխիներով կամ ուրագներով: Բաղճանը յերեք չպետք է աչքաթող անել, վորովհետև նրանք ուժեղ կերպով զարգանալով՝ կարող են խեղդել դեռևս չարմատակալած թույլ մատերին:

Այնուհետև նոր տնկած այգին տարեցտարի ետելով վազերին տալիս են այն ձևավորումը, ինչ վոր ցանկալի յե այգեաիրոջը: Թե նոր այգին և թե տնկարանը պետք է անպայման աշնանը թաղել՝ մատերը ծածկելով 16-20 սանտիմ հաստությամբ հողով, իսկ վաղ գարնան նորից բացելով՝ ետել:

XI. ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ

Շատ անգամ կարիք է լինում խաղողի վազը պատվաստել (պատրիս անել), այսինքն՝ խաղողի մեկ տեսակի վրա մի ուրիշը, կամ նույն տեսակը միացնել: Սյդ

դեպքում խաղողի այն տեսակը, վորի վրա պատվաստում են, կամ վորը վազի արմատն է կազմում—կոչվում է պատվասակալ, իսկ այն մասը, վորը պատվաստվում է, կամ կազմելու յե պատվաստած վազի բունը կամ ցողունը—կոչվում է պատվասացու:

Խաղողի վազերի վրա պատվաստ անում են հետևյալ դեպքերում.

1. յեթե ձմրան սառնամանիքներից փչացել է վազի բունը,

2. յեթե գոյություն ունեցող վազը թեև լավ զարգացած է, բայց լավ չէ պաղարբերում կամ վատ հատկության պտուղներ ունի,

և 3. յեթե վորևե շրջանում յերեացել է ֆիլոքսերա կոչվող հիվանդությունը:

Առաջին և յերկրորդ դեպքում կարելի յե տեղական արմատակալած վազերի վրա պատվաստել տեղական տեսակներից, իսկ յերրորդ դեպքում՝ տեղական տեսակները պատվաստում են ամերիկական տեսակների վրա, վորովհետև ամերիկական վորոշ տեսակի վազերը ֆիլոքսերայից չեն վախենում, իսկ տեղական բոլոր տեսակները վնասվում և վոչնչանում են ֆիլոքսերայից:

Պատվաստ անելը մի քանի նպատակ ունի: Պատվաստում են այն դեպքում, 1. յեթե կամենում են փոխաբերել խաղողի մի տեսակը մի ուրիշով, 2. յեթե կամենում են յերիտասարդացնել (նորոգել) խաղողի հին վազը և վերականգնել նրա պտղաբերությունը, 3. յեթե կամենում են արագացնել նորոգած վազի պտղաբերությունը և 4. յեթե կամենում են վերականգնել այգին, վորը ֆիլոքսերայով արդեն վարակվել է:

Պատվաստելու աշխատանքները հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է նախորոք, վաղ գարնանից պատրասել պատվաստացունները: Դրա համար պետք է հին խաղողի այգում ջուկել ամենապտղատու և ամենա-

առողջ վաղերը, և նրանց մատերից ջուկել ամենաառողջները, այսինքն՝ նրանք, վորոնք նախորդ տարին հիվանդ չեն լեղել և լավ են զարգացել: Այդպիսի պատվաստացու մատերը պետք է ժողովել և պահպանել մի վորեն ծածկած տեղում, վորպեսզի քամիները և արևի ճառագայթները չչորացնեն մատերը մինչև պատվաստելը: Պատվաստացուները պահպանելու համար պետք է փորել կես մետր խորությամբ առուներ, վորոնց մեջ շարելով 100—200 հատ միասին կապած մատեր՝ լցնել քիչ խոնավ ավազով, իսկ յերեսից ծածկել հողով: Այս ձևով կարելի չե պատվաստացու մատերը շատ լավ պահպանել, մինչև պատվաստը կատարելու ժամանակ:

Յեթե հարկավոր է պատվաստ կատարել հին վաղի վրա, պետք է ամենից առաջ վաղի բունը հողի յերեսից սղոցով ուղիղ կտրել՝ դարձան լացն սկսվելու ժամանակ: Պատվաստացու մատերը կտրտում են ամեն մի կրտորի վրա թողնելով 2 աչք միայն և պատվաստի սուր դանակով (տես նկ. 18) պատվաստացուն սեպաձև տաշում



Նկ. 18

Պատվաստի դանակներ


են յերկու կողմից՝ ներքևի աչքի տակից այնպես, վոր տաշած տեղը խորթուրդություններ չունենա (տես հաջ. յեր. նկ. 19): Այնուհետև սովորական դուրով պատվաստակալը մուրճի մի քանի հարվածներով ճեղքելով, պատվաստացվի սեպաձև մասը հազցնում են պատվաստակալի ճեղքածքի մեջ և ռաֆիայով կամ նոր ճլոպով (խսիրով) կապում (տես հաջ. յեր. նկ. 20): Կապելուց հետո լավ կլինի բնի կրտ-

րած տեղը կավ քսել, վորպեսզի ճեղքվածքները ծածկվեն: Պատվաստացուն պետք է հազցնել ճեղքվածքի մեջ այնպես, վոր պատվաստացվի և պատվաստակալի դրսի կեղևներն իրար կպչեն, հակառակ դեպքում՝ պատվաստը չի կրպչի: Չափազանց կարևոր է, վոր պատվաստացվի սեպ կտրելը կատարվի դանակի մի քաշելով, վորովհետև այդ դեպքում կտրած սեպը միանգամայն հարթ է լինում: Բայց դրա համար հարկավոր է փորձառություն և ով փորձված չէ, պետք է նախորդ լավ վարժվի: Կտրած սեպը պետք է ունենա մեկ և կես սանտիմ (կես վերջուկ) յերկարություն: Պատվաստելու ժամանակ շատ զգույշ պետք է լինել, վորպեսզի պատվաստացու մատի աչքերը չփխսվեն:

Պատվաստելու աշխատանքը վերջացնելուց հետո, պետք է պատվաստած վաղի շուրջը հողը թուփ անել և հողով ծածկել ամբողջ պատվաստը՝ մինչև նրա վերևի ծայրը: Այսպիսով պատվաստելու աշխատանքը կարելի չե վերջացած համարել:

Նկ. 19
Պատվաստացու
տաշումը:

Մի առժամանակից հետո պատվաստած հին վաղի մնացորդ բնից առաջ են գալիս նոր շիվեր, վորոնց պետք է պոկել և հեռացնել: Պատվաստելուց մի ամիս հետո կարելի չե հողով թաղած պատվաստը բացել: Պատվաստը կպչելու դեպքում աչքերը սկսում են ուռչել և կամաց-կամաց բացվել, լավ կլինի պատ-




Նկ. 20

Կատարած պատվաստ:

վաստած վազերի մոտ փայտե ցցեր տնկել և աչքերից դուրս յեկած շիվերը, յերբ նրանք բավական մեծացած կլինեն՝ կապել այդ ցցերից, փորպեսզի քամին չկոտրատեն շիվերը:

Արմատակալած ամերիկական վազերի վրա պատվաստ արվում է նույն ձևով: Բայց յեթե անմիջական պատվաստակալը և տեղական պատվաստացուն մի տարեկան մատերից են վերցված, այդ դեպքում պետք է աշխատել, փոր յերկուսն ել միևնույն հաստությունն ունենան: Պատվաստելու համար թե պատվաստացուն և թե ամերիկական պատվաստակալը կտրում են վոչ սեպաձև, այլ




Նկ. 21

Պատվաստացուն և ամերիկական պատվաստակալը:

Նապ մամուռի կամ ավազի մեջ՝ կանոնավոր դարսելով և ավազով լավ ծածկելով: Այնուհետև ապրիլ ամսվա ընթացքում ավազից հանելով պատվաստները տրնկում են տնկարանում իրարից 15—20 սանտիմ հեռավորությամբ այնպես, փոր պատվաստի ամերիկական մասը մինչև պատվաստված տեղ թաղված լինի հողի մեջ, իսկ պատվաստացուն պետք է ավազով մինչև ծայրը ծածկել

թեք ուղղությամբ և միայն մեկ կողմից (տես նկար 21): Այնուհետև յերկուսի վրա ել թեք կտրվածքի մեջտեղից մի քիչ ձեղքում են և իրար հազցնելով՝ նորից ռաֆիայով կամ ճրպով ամուր կապում (տես, հաշ. յեր. նկ. 22): Պատվաստելու այս ձևը կոչվում է անգլիական:

Անգլիական պատվաստը պետք է տնել փետրվարի վերջերից սկսած՝ մինչև մարտի վերջերը կամ ապրիլի 10-ը և ամեն որվա պատրաստի պատվաստները պահել խո-



Նկ. № 22

Անգլիական պատվաստ:

և բացել մայիսի վերջերից վոչ շուտ (տես նկար 23):

Ամերիկական պատվաստակալացու մատը պետք է ունենա 50—55 սանտիմ (10—12 վերշուկ) յերկարություն:

Յերբ պատվաստը վերջնականապես կպել է և ամրացել, մոտավորապես հունիսի վերջերին, պետք է կապած ռաֆիան կամ ճրպը սուր դանակով զգուշությամբ կտրել թուլացնել, փորպեսզի ռաֆիան պատվաստը չխեղդի:

Շատ անգամ հողի միջից պատվաստի ամերիկական մասի աչքերից առաջնի դալիս շիվեր: Այդ շիվերը պետք է փոխհացնել հենց սկզբից և յեթ, չթողնելով վոր նրանք զարգանան ու ամրանան:

Կան պատվաստելու բազմաթիվ ուրիշ ձևեր, բայց մենք նրանց մասին այստեղ չենք խոսի, քանի վոր մեր բերած ձևերն ամենից պարզ, հարմար և հեշտ ձևերն են:

XII. ԽԱՂՈՂԻ ՎԱՋԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Խաղողի վաղի հիվանդութիւններն աւ փնասատուները շատ են, բայց դրանցից մենք այստեղ կ'աւանդենք միայն նրանց վրա, վորոնք մեզանում տարածված են և պակաս փնասներ են հասցնում մեր այգիներին: Այդ փնասատուները 2 տեսակ յեն: Մեկային հիվանդութիւններ՝ միլդիու (չոռ) և ուրտիու (թող) և փնասատու միջատներ՝ եռլիսյան կամ մարմարե բզեզ և Քիլոֆսերա: Վերջինս, թեև մեր յերկրում դեռևս չկա, բայց նրա մոտայուտ վրասնակի առաջ ենք կանգնած, քանի վոր մեր հարևան Վրաստանում այդ սոսկալի փնասատուն կատարյալ ապկերութիւններ և կատարում և կարող է մեզ մոտ ել յերևալ:

Միլդիու: Այս հիվանդութիւնը, վոր մեզանում հայտնաի յե «չոռ» անունով, առաջ է գալիս մի սունկից, վորի աննկատելի սերմերը (սպորները) տարածված են լինում տղի մեջ: Գարնան վերջերին սերմն ընկնելով կանաչ տերևներին վրա, տաք յեղանակին բավական է մի կաթիլ ջուր (անձրևից, ցողից, մառախուղից) և նա սկսում է աճել: Նրա ծիւրերը մտնում են տերևի ներսի փափուկ մասերի մեջ, և յուզաւորվում և տարածվում են ամբողջ տերևի վրա: Երբ ժամանակից հետո սունկը հասունանում է և դուրս գալով տերևի հերձանցքներից (ծակոտիւններից)՝ առաջացնում է տերևի ներքևի կողմից փոշի: Նախ քան փոշու առաջ գալը, տերևի յերեսին նկատվում են դեղնավուն բծեր (կետեր), վորոնց դիմաց տերևի տակից մի առժամանակից հետո առաջ է գալիս սպիտակ փոշին: Բծերը կամաց կամաց մեծանում են և ստանում ավելի մուգ գույն և վերջապես տերևի բծոտ տեղերը չորանում են: Տերևը, այդպիսով, բազմաթիւ չորացած տեղեր է ունենում, իսկ շատ անգամ ամբողջապես չորանում է: Բացի

տերևից, այդ սունկով կարող են հիվանդանալ վաղի բոլոր կանանչ մասերը՝ ծաղիկները, վողկույզները և թաթ շիվերը:

Յերբ վաղը միլդիուով արդեն հիվանդացել է, բժշկել նրան այլևս չի կարելի: Չորացած տերևն այլևս կանաչացնել չի կարելի, այդ պատճառով կռիւր միլդիույի դեմ մղում են այն նպատակով, վոր նա չտարածվի խաղողի այգու մյուս մասերում: Այսպիսով, այն միջոցները վոր գործ են ածվում միլդիույի դեմ՝ միայն նախազգուշացման միջոցներ են յեւ վոյ բժեկելու, արնպես, ինչպես յերեսայի ծաղիկը կտրում են, վոր նա ծաղիկ չհանի:

Միլդիու հիվանդութիւնից վաղը պաշտպանելու համար, պետք է մինչեւ հիվանդութեան յերեւել լը, անպաւման սեւելի բորդոյան հեղուկով: Բորդոյան հեղուկը պատրաստում են այսպես: Վորեն փայտի տակառի մեջ լցնում են 6 վեդրո ջուր և լուծում են 5 ֆունտ պղնձի արջասպը (կապույտ քար): Լուծելու համար արջասպը լցնում են տոպրակի մեջ և կախում ջրի մեջ՝ թողնելով մի քիչեր: Այդ ժամանակամիջոցում նա ամբողջութեամբ լուծվում (հալվում) է ջրի մեջ: Մի ուրիշ տակառում հանգցնում են 3 ֆունտ այրած, (բայց չհանգած) կիր, կամաց-կամաց ջուր ածելով նրա վրա և խառնելով, մինչև վոր ստացվի մածնի նման խառնուրդ: Ապա այդ կրաշաղախը անցնել կացնում մաղի միջով, վորպեսզի կիր մեջ յեղած ավազը և մանր քարերը մաքրվեն և այնքան ջուր են ավելացնում վրան, վոր ստացվի 4 վեդրո կրաշաղախ: Յերբ յերկու հեղուկն ել պատրաստ է, կրաջուրը բարակ շերտով ածում են արջասպի տակառի մեջ և փայտով շարունակ լով խառնում: Յերբ չայեւ է արջասպի ջուրը լցնել կրաջրի վրա, այլ, ընդհակառակն, պետք է անպայման կրաջուրը լցնել արջասպի ջրի վրա: Այսպիսով ստացվում է բորդոյան հեղուկ, վորի մեջ

լցնում են՝ 10 վեդրո շուր, 5 ֆունտ արջասպ և 3 ֆունտ կեր:

Բորդոյան հեղուկով վազը սրսկում են հատուկ մեքենայով այնպես, վոր հեղուկը մանր կաթիլներով ցրվի տերևների և մյուս կանաչ մասերի վրա:

Սրսկել պետք է գարնան և ամառվա ընթացքում 2—3 անգամ: Առաջին անգամ պետք է սրսկել, յերբ խաղողը դեռ չի ծաղկել, յերկրորդ անգամ՝ ծաղիկը վերջանալուց և մանր պտուղներ տալուց հետո, իսկ յերրորդ անգամ՝ հուլիսի սկզբներին: Այս վերջին սրսկումն ամենից կարևորն է մեզնում: Յեթե սրսկումը յուր ժամանակին և կանոնավոր կատարվի, կարելի չէ ապահով լինել, վոր միլիոն հիվանդություն մեր այգիներում չի լինի: Սրբսկումը պետք է կատարել անպայման չոր յերանակին:

Որդիում: Այս հիվանդությունը, վոր մեզանում «սև» է կոչվում, բավական տարածված է և մեր այգիներին ահագին վնասներ է պատճառում: Որդումը նույնպես սընկային հիվանդություն է, տարածվում է յուր չափազանց մանր ու աննկատելի սերմերով կամ սպորներով, ինչպես միլիոն, այն տարբերությամբ միայն, վոր սրա աճող մասերը տարածվում են վաղի զանազան մասերում՝ դրոսից և մարմնի ներսը չեն մտնում: Որդիումի սպորների զարգացման համար անհրաժեշտ է ջրի կաթիլի ներկայություն, ինչպես միլիոնյի համար, այլ բավական է միայն ոգի խոնավություն:

Որդիումով վարակված վազերը մի տեսակ թուլանում են, նրա բոլոր կանաչ մասերի վրա մոխրագույն բծեր են առաջ գալիս և հոտած ձկան հոտ են ունենում: Սկզբում այդ բծերը բաց գույնի յեն լինում, հետո ավելի մուգ գույն են ստանում: Որդիումով վարակված տերևները հեշտությամբ թափվում են, իսկ պտուղները ճաքճքում և չորանում: Լինում են տարիներ, յերբ այդ հիվանդությունն այգիների բերքի մեծ մասը վնասաց-

նում է և թե ուտելու, թե գինու համար անպետք դարձնում:

Բժշկելու ամենալավ միջոցը համարվում է ծծումբի (քուքուրդ) փոշին, վորը վազերին փչում են հատուկ (մեջքի) մեքենայով, այդ մեքենան «տորպիլ» է կոչվում: Այս գործիքով աշխատանքը կատարվում է և՛ արագ և՛ լավ: Կարելի չէ ծծումբ փչել և ձեռքի փուքսերով, (տես նկ. 24), վորոնք շատ եժան են և հեշտությամբ կարող են մեղ



Նկ. 24

Ձեռքի փուքս

մոտ էլ պատրաստվել: Վազերը ծծումբ փչելու համար պետք է ընտրել այնպիսի ժամանակ, յերբ որը հանգիստ է և քամի չկա:

Գարնան և ամառվա ընթացքում ծծումբ պետք է փչել 2—3 անգամ: Առաջին անգամ պետք է փչել խաղողը ծաղկելու ժամանակ, յերկրորդ անգամ՝ հունիսին, իսկ յերրորդ անգամ՝ հուլիսի սկզբներին, յեթե հիվանդության նշաններ յերևան: Բժշկությունը չպետք է յերբեք ուշացնել, վորովհետև ոգիումը մի անգամ յերևալուց հետո շատ արագ տարածվում է:


Հուլիսյան կամ մարմարե բզեզ: Այս բզեզին (բողոճ) հունիսի կեսերից սկսած կարելի չէ միշտ տեսնել մեր այգիներում, ուր թռչում են նրանք գլխավորապես յերեկոները, արևի մայր մտնելու ժամանակ մինչև մութն ընկնելը (տ. հաջ. յեր. նկ. 25): Այդ ժամանակ նրանք գուրավորվում են և եզ բզեզները խորանալով հողի մեջ ածում են իրենց ձվերը, վորոնցից դուրս են գալիս վորդերը: Սկզբում վորդը փոքր է լինում և քանի գնում մեծանում է և 3 տարի ապրելով հողի մեջ լափում, վոչնչացնում է զանազան բույսերի արմատներ, վորոնց թրվում և վաղի արմատները: Հուլիսյան բզեզի վորդը ամենից շատ, (տես հաջ. յեր. նկ. 26), փաստում է ջահել վազե-



Նկ. 25

Հուլիսյան կամ մարմարի բզեզ:

բին, կտրելով նրանց արմատները և բուռն: Այս չափազանց փնասակար միջատի դեմ կռվի կտրուկ միջոցներ, գլխաբախտաբար, չկան: Գլխավոր միջոցն՝ վաղ առավոտյան, յերբ բզեզներն անշարժ ընկած են լինում վազի թփի տակ և անկարող են շարժվել գիշերվա ցրտից, ժողովել և վռնչացնելն է: Սրանց վորդերը պետք է ժողովել և վռնչացնել այգիները փորելու ժամանակ: Բայց այդ ժողովելը և վռնչացնելը պետք է կազմակերպված լինի և պիտի կատարեն բոլոր այգետերերը, հակառակ դեպքում, բզեզները հեշտությամբ թռչում են և հո-



Նկ. 26

Հուլիսյան բզեզի վորդը:

բից բուռն դնում այն այգիներում, ուր արդեն ժողովել և վռնչացրել են նրանց:

Ֆիլոքսերա: Վաղի թշնամիներից ամենապատահալորը՝ ֆիլոքսերան է: Յեվրոպա այս միջատը մուտք է գործել Ամերիկայից և Ֆրանսիայում, սկսած 1868 թվից սոսկալի ավերածություններ է կատարել, 20 տարվա ընթացքում վռնչացնելով Ֆրանսիայի 2 միլիոն գետափնից ավելի այգիների կեսը: Ֆրանսիայից նա տարածվել է Յեվրոպայի մյուս յերկրները, իսկ հետո նաև մեր հարևան Վրաստանը, ուր վերջին 10 տարվա ընթացքում սկսել է ավերել Իմերեթիայի և Բարթալիայի շրջանների խաղողի այգիները: Իսկ այժմ տարածվել է նաև Կախեթիայում և Շուրավերի շրջանում: Մեզ մոտ այդ փնասատուն մինչև այժմ չկա, բայց լեթե պատահաբար վրաստանից վազեր բերվեն՝ կտարածվի և մեզնում: Այդ պատճառով, զրսից վաղ բերելիս շատ զգուշ պետք է լինել:

Ինքը, ֆիլոքսերան, մի շատ փոքրիկ լվիճ է, վոջից շատ փոքր, համարյա աչքով անտեսանելի (տես նկար 27) վերը ապրում է վաղը արմատների վրա, ծծում է նրանց հյութերը, ուսույցներ առաջացնում և չափազանց արագ բազմանում: Ֆիլոքսերայով վարակված վազն սկսում է



Նկ. 27

Ֆիլոքսերա. խիտ մեծացրված:

նվագել, թողնել, թուլանալ և մի քանի տարվա ընթացքում բոլորովին չորանում եւ Սրանց դեմ կռիւն միակ և հիմնական միջոցը՝ վարակված վագերի արմատից վռնչացնելն եւ Մի անգամ տարածվելուց հետո այլևս Ֆիլոքսերայից ազատվելու հնար չկա և միակ միջոցը՝ ամերիկական մի բանի տեսակ խաղողների վրա պատվաստված վագեր տնկելն է։

Ամերիկական վագերն այն առավելութիւնն ունեն, վոր Ֆիլոքսերան նրանց արմատները վրա լինում է, բայց վոչ մի վնաս չի հասցնում, ուրիշ խոսքով՝ ամերիկական վագերի մի շարք տեսակները Ֆիլոքսերային դիմանում են։ Յեւ ամեն տեղ, ուր Ֆիլոքսերան մուտք է գործել, վագուց արդեն խաղողի բոլոր այգիները պատվաստում են ամերիկական պատվաստակալների վրա։

Մենք չենք կարող կանգ չառնել յայտեղ նաև մի վնասակար բույսի վրա, վորը մեզնում սաստիկ տարածված է։ Այդ դայախոտն է կամ դաղձը (դելուկ, ժիշկ, կուսկուտա)։ Դաղձը մի բոյս է, վոր ծլելով սերմից՝ փաթաթվում է վագի վրա, արագ ճյուղավորվում և յուր մարմնով փաթաթվելով վագի բնին, թևերին, մատերին և նույն իսկ ձթերին՝ կաշում է նրանց ու ծծելով կերակրվում նրանց հյութերով։ Դժբախտաբար դաղձը շատ տարածված է մեզնում և կան այգիներ, վորոնց կարելի չէ ուղղակի դաղձանոց անվանել։ Շատ արագ աճելով, դաղձը ամրան կեանքին ծաղկում է, մեծ քանակութեամբ սերմ տալիս և այդպիսով ավելի ու ավելի մեծ չափերով տարածվում։ Ամենից շատ այս վնասակար բույսը տարածված է լինում այն այգիներում, վորոնք խնամքից զուրկ են և չեն փորվում, կամ՝ ուշ-ուշ են փորվում։

Կռվի միակ միջոցը՝ դաղձը ձեռքով ժողովելն ու վռնչացնելն է։ Ժողովել պետք է ինչքան կարելի չէ մաքուր, հենց վոր նրանք յերևում են, վոչ մի կտոր անգամ չթողնելով վագի վրա։ Ժողովելուց հետո պետք է

կույտեր կազմել ու վառել։ Մի բան պետք է շատ լավ գիտակցի ամեն մի այգետեր. նա, ով յուր այգում դաղձը չի ժողովում, վոչ միայն վնասում է իրեն, այլ և յուր հարևանին, վորովհետև դաղձը հասնելով և ահագին քանակութեամբ սերմերը թափելով գետնի վրա, ջրի հետ տեղափոխվում է մյուս այգիները և վարակում նրանց։



Ց Ա Ն Կ

ԾԶ.

1. Յերկու խոսք մեր ընթերցողներին	3
2. Յերկու խոսք	5
3. Հողը	7
4. Խաղողի այգու դիրքը, լույսի յեւ ջերմութեան նշանակու- թյունը	8
5. Այգու մշակութունը	10
6. Ետելը կամ կտրելը	13
7. Վազի ձեւավորումը	15
8. Ամառվա խնամքը	24
9. Զրելը	28
10. Յրտահարութիւնը	30
11. Ի՞նչ անել ցրտահարված այգիներին հետ	34
12. Խաղողի հոր այգի տնկելը	35
13. Պատվաստումը	38
14. Խաղողի վազի հիվանդութիւնները յեւ նրանց դեմ կըն- վելու միջոցները	44

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՀԵՏՁՀԵՏԵ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Յեղջուրավոր անասունի Ժանտախտը:
1. Դենագերչակ

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԾԶ	Տող	Տպված է	Պիտի լինի
6	Վերջին	պետք համարել	պետք է համարել
21	Առաջին	միակողմանի	կրկնակի
26	4-րդ ներքեից	պտուկներին	պտուկներին
50	Առաջին	թողնել	թողնել

«Ազգային գրադարան»



NL0280774

20296